ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«14» «հունիսի» 2021 թ. № 207-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի N 133-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի ապրիլի 22-ի «Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքները կառավարող պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանություն իրականացնող աշխատակիցների և նրանց օժանդակող մասնագետների, Անտառային կոմիտեի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության անտառապահների և նրանց օժանդակող մասնագետների արտահագուստի նկարագիրը հաստատելու մասին» №133-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) հրամանի վերնագրում «ՆԿԱՐԱԳԻՐԸ» բառից հետո լրացնել «ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ» բառերը,
   2) հրամանի 1-ին կետում և հրամանի հավելվածի վերնամասում «հավելված» բառը փոխարինել «հավելված №1» բառերով,
   3) հրամանը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով՝

   «2. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքները կառավարող պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանություն իրականացնող աշխատակիցների և նրանց օժանդակող

մասնագետների, Անտառային կոմիտեի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության անտառապահների և նրանց օժանդակող մասնագետների արտահագուստի կրելու կարգը համաձայն հավելված №2-ի»:

4) հրամանը լրացնել նոր Հավելված №2ով՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա.ՄԱԶՄԱՆՅԱՆ

6/14/2021

X

ԱՆՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Signed by: MAZMANYAN ANNA 5308800774

«_14_» հունիսի 2021թ.
ք.Երևան